ԽՈՐՀՐԴԻ 1987 թվականի հունիսի 25-ի ՀՐԱՀԱՆԳ

անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին, որոնք վերաբերում են այն արտադրատեսակներին, որոնք, թվացյալ լինելով այլ, քան իրականում կան, վտանգում են սպառողների առողջությունը կամ անվտանգությունը

(87/357/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ մասնավորապես դրա 100-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը[2],

քանի որ մի քանի անդամ պետություններում գործում են իրավական դրույթներ կամ կարգավորումներ, որոնք վերաբերում են կոնկրետ արտադրատեսակների, որոնք թվացյալ լինելով այլ, քան իրականում կան, վտանգում են սպառողների առողջությունը կամ անվտանգությունը,

քանի որ, այդուհանդերձ, այդ դրույթների բովանդակությունը, գործողության շրջանակը եւ ոլորտը տարբերվում են, քանի որ մասնավորապես այդ դրույթները վերաբերում են որոշ անդամ պետություններում բոլոր այն արտադրատեսակներին, որոնք նման են սննդամթերքների՝ չլինելով այդպիսիք, մինչդեռ այլ անդամ պետություններում դրանք վերաբերում են այն արտադրատեսակներին, որոնց հավանական է, որ շփոթեն այլ սննդամթերքների, հատկապես՝ հրուշակեղենի հետ,

---

[1] [1] ՊՏ թիվ C 156, 15.6. 1987թ.
[2] ՊՏ թիվ C 150, 9.6.1987թ., էջ 1:

քանի որ այս իրավիճակն ապրանքների ազատ տեղաշարժման համար զգալի արգելքներ եւ Համայնքի ներսում անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում՝ առանց ապահովելու սպառողների, հատկապես՝ երեխաների արդյունավետ պաշտպանությունը,

քանի որ պետք է վերացնել ընդհանուր շուկայի ստեղծման ու գործունեության այս խոչընդոտները եւ ապահովել սպառողների պատշաճ պաշտպանությունը՝ համաձայն «Սպառողների պաշտպանության եւ տեղեկատվական քաղաքականության մասին» Եվրոպական տնտեսական համայնքի համապատասխանաբար առաջին[1] եւ երկրորդ [2] ծրագրերի վերաբերյալ Խորհրդի 1975 թվականի ապրիլի 14-ի եւ 1981 թվականի մայիսի 19-ի բանաձեւերի եւ Խորհրդի 1986 թվականի հունիսի 23-ի «Նոր խթան սպառողների պաշտպանության քաղաքականության համար» բանաձեւի[3],

քանի որ սպառողների առողջությունն ու անվտանգությունը պետք է տարբեր անդամ պետություններում ունենան պաշտպանության հավասար մակարդակ,

քանի որ այդ նպատակով անհրաժեշտ է արգելել այն արտադրատեսակների շուկայահանումը, ներմուծումը եւ թե՛ արտադրությունը, թե՛ արտահանումը, որոնք վտանգում են սպառողների առողջությունն ու անվտանգությունը, քանի որ դրանք կարելի է շփոթել այլ սննդամթերքների հետ,

քանի որ պետք է սահմանել դրույթ, որով անդամ պետությունների իրավասու մարմինները վերահսկողություն կիրականացնեն,

քանի որ Խորհրդի՝ սպառողների պաշտպանության վերաբերյալ բանաձեւերով ամրագրված սկզբունքների համաձայն՝ վտանգավոր արտադրատեսակները պետք է հանվեն շուկայից,

---

[1] ՊՏ թիվ C 92, 25.4.1975թ., էջ 1:
[2] ՊՏ թիվ C 133, 3.6.1981թ., էջ 1:
[3] ՊՏ թիվ C 167, 5.7.1986թ., էջ 1:

քանի որ պետք է սահմանել դրույթ, որով հնարավոր կլինի քննարկել եւ ուսումնասիրել այդպիսի արտադրատեսակներն արգելելու կամ դրանք շուկայից հանելու նպատակով անդամ պետությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ապահովելու սույն հրահանգով ամրագրված սկզբունքների միասնական կիրառությունը Համայնքի ամբողջ տարածքում, քանի որ նշված ուսումնասիրությունն ու քննարկումը կարող են անցկացվել 84/133/ԵՏՀ որոշմամբ ստեղծված Խորհրդատվական կոմիտեում[1],

քանի որ հաշվի առնելով գործողության ոլորտն այնպես ընդլայնելու հնարավոր անհրաժեշտությունը, որպեսզի այն տարածվի սննդամթերքի վտանգավոր նմանակումների վրա, եւ որպեսզի գնահատվեն ու վերանայվեն սույն հրահանգով սահմանված ընթացակարգերը, պետք է սահմանել դրույթ, ըստ որի՝ Խորհուրդը, սույն հրահանգի իրականացումից երկու տարի հետո եւ գործելով ձեռք բերված փորձի վերաբերյալ Հանձնաժողովի զեկույցի հիման վրա, որոշում կայացնի հրահանգի դրույթների հնարավոր համապատասխանեցման վերաբերյալ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն հրահանգը կիրառվում է ստորեւ՝ 2-րդ պարբերությունում սահմանված արտադրատեսակների նկատմամբ, որոնք, թվացյալ լինելով այլ, քան իրականում կան, վտանգում են սպառողների առողջությունը կամ անվտանգությունը:

2. Վերեւում՝ 1-ին պարբերությունում նշված արտադրատեսակները չնայած սննդամթերքներ չեն, սակայն ունեն այնպիսի ձեւ, հոտ, գույն, տեսք, փաթեթավորում, պիտակավորում, ծավալ կամ չափ, որ հավանական է, որ սպառողները, հատկապես՝ երեխաները, դրանք շփոթեն սննդամթերքների հետ եւ հետեւաբար դնեն իրենց բերանը կամ ծծեն կամ կուլ տան դրանք, ինչը

[1] ՊՏ թիվ L 70, 13.3.1984թ., էջ 16:

կարող է վտանգավոր լինել եւ առաջացնել, օրինակ, շնչահեղձություն, թունավորում կամ մարսողական տրակտի պերֆորացիա կամ խցանում:

Հոդված 2

Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ արգելելու սույն հրահանգում նշված արտադրատեսակների շուկայահանումը, ներմուծումը եւ թե՛ արտադրությունը, թե՛ արտահանումը:

Հոդված 3

Անդամ պետությունները մասնավորապես ապահովում են, որ իրականացվեն շուկայում առկա արտադրատեսակների ստուգումներ՝ համոզվելու, որ սույն հրահանգի գործողության շրջանակում ընդգրկվող որեւէ արտադրատեսակ չշուկայահանվի, եւ ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու, որ իրենց իրավասու մարմիններն իրենց շուկաներից հանեն կամ ստիպեն հանել ցանկացած արտադրատեսակ, որի վրա տարածվում է սույն հրահանգը:

Հոդված 4

1. Եթե անդամ պետությունը 2-րդ եւ 3-րդ հոդվածների համաձայն հատուկ միջոց է ձեռնարկում, ապա այն Հանձնաժողովին տեղեկացնում է այդ մասին: Այն ներկայացնում է արտադրատեսակի նկարագրությունը եւ իր որոշման հիմքերը:

   Եթե արտադրատեսակի մանրամասները 84/133/ԵՏՀ որոշմամբ արդեն իսկ պահանջվում են, ապա սույն հրահանգով որեւէ հետագա ծանուցում չի պահանջվում:

Հանձնաժողովը հնարավորինս շուտ մանրամասներն ուղարկում է մյուս անդամ պետություններին:

2. Հանձնաժողովը կամ անդամ պետությունը կարող է 84/133/ԵՏՀ որոշմամբ ստեղծված Կոմիտեից պահանջել մասնակցել սույն հրահանգի կիրառությանն առնչվող հարցերի վերաբերյալ կարծիքների փոխանակմանը:

Հոդված 5

Խորհուրդը 6-րդ հոդվածում նշված ամսաթվից երկու տարի անց, հիմնվելով ձեռք բերված փորձի վերաբերյալ Հանձնաժողովի զեկույցի վրա, որն ուղեկցվում է համապատասխան առաջարկներով, կայացնում է որոշում սույն հրահանգի հնարավոր համապատասխանեցման վերաբերյալ, մասնավորապես՝ դրա գործողության ոլորտն այնպես ընդլայնելու նպատակով, որպեսզի այն տարածվի սննդամթերքների նմանակումներից բացի այլ վտանգավոր նմանակումների եւ 4-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերի ցանկացած վերանայման վրա:

Հոդված 6

1. Անդամ պետությունները ձեռնարկում են սույն հրահանգի կատարման համար անհրաժեշտ միջոցները ոչ ուշ, քան 1989 թվականի հունիսի 26-ը: Նրանք այդ մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում սույն հրահանգով կարգավորվող ոլորտում ընդունվելիք ազգային օրենսդրության դրույթների տեքստերը:

Հոդված 7

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում 1987 թվականի հունիսի 25-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Է. ԴԵ ՔՐՈՒ